

ՄԱՆԿԱԴԱՏԱՆԵԿԱՆ ՀՈՐԻԶՈՆ

ՅԱԻԵԼՈՒԱԾ «ՀՈՐԻԶՈՆ» ՇԱԲԱԹԱԹԵՐԹԻ

Դեկտեմբեր 2025

ՄԵՐ ԽՕՍՔԸ

Սիրելի աշակերտներ,

Կաղանդի տօնական մթնոլորտ կը տիրէ մեր շուրջ: Կաղանդի երգեր ու զանգակներու ղօղանջներ, տօնածառ ու գոյնզգոյն լոյսեր, զարդարուած ցուցաբեղկեր ու սիրուն խաղալիքներ:

Կաղանդ Պապուկն ու իր թզուկները կը տանին մեզի հեքիաթային աշխարհ մը: Հաճելի է ապրիլ ու վայելել այդ պահը: Ուրախանալ ուրախութիւն պատճառելով փոքրիկներուն եւ տարեցներուն, ուրախացնելով ընտանիքի անդամներն ու ընկերները. բայց չմոռնանք նաեւ մեր հայրենիքի հերոսներն ու անոնց ընտանիքներու անդամները, հիւանդներն ու աղքատները: Աշխատիլ ձեռով մը օգտակար դառնալու ու ձեռք երկարելու իրենց: Աղօթել ու մաղթել, որ բարին կատարուի եւ յոյսը մարդոց հոգիներուն մէջ երբեք չմարի:

Շնորհաւոր Նոր Տարի եւ Սուրբ Ծնունդ



ԻՆՉՊԷՍ ՏԱՐԲԵՐ ԵՐԿԻՐՆԵՐ ԿԸ ԴԻՄԱԴՈՐԵՆ ՆՈՐ ՏԱՐԻՆ

Նոր տարին մեծ շուքով կը տօնեն ամէնուրեք, սակայն ոչ մէկը զայն կը դիմաւորէ նոյն ձեռով: Ամէն ժողովուրդ ունի իր առանձնայատուկ ավանդոյթները: Ահա 7 հետաքրքրական օրինակներ:

ՍՊԱՆԻԱ



Սպանացիները Նոր տարին կը սկսին... խաղողով: Կէս գիշերուան 12-ին, 12 զանգերու ղօղանջներուն հետ անոնք կ'ուտեն 12 խաղողի հատիկներ, որոնցմէ իւրաքանչիւրը կը ներկայացնէ տարուան մէկ ամիսը: Սպանացիները կը հաւատան, որ եթէ բոլորը հասցնեն ուտելու առանց խեղդուելու՝ տարուան 12 ամիսներն ալ յաջող պիտի ըլլան:

ՃԱՓՈՆ




Ճափոնի մէջ, երեկոյեան, բոլոր տաճարները կը հնչեցնեն 108 զանգեր, որոնք կը ներկայացնեն 108 մեղքեր եւ ցանկութիւններ: Ժողովուրդը կը հաւատայ, որ իւրաքանչիւր ղօղանջ հոգին կը մաքրէ վատ մտքերէ եւ խաղաղութիւն կը բերէ:

ՅՈՒՆԱՍՏԱՆ



Յոյները տուն կը բերեն նուռ մը: Կէս գիշերին այդ նուռը ուժով կը զարնեն դրան՝ անթիւ մասերու բաժնելով զայն: Տարածուած հատիկներուն թիւը որքան մեծ ըլլայ, այնքան աւելի մեծ բարիք եւ բախտ կը սպասէ զիրենք եկող տարուան ընթացքին:

ԴԱՆԻԱ



Դանիացիները իրենց հին պնակները թափելու փոխարէն, մէկ կողմ կը դնեն տարուան վերջին գիշերուան համար: Կէս գիշերին անոնք կ'այցելեն իրենց ընկերներուն եւ հարազատներուն տունները ու պնակները կը կոտորեն անոնց դրան շեմին՝ բարիք եւ ուրախութիւն մաղթելու համար: Հակառակ աղմուկին, որքան աւելի շատ պնակներ փշրուին մէկուն դրան առջեւ, այնքան աւելի սիրուած կը սեպուի:

ՊՐԱԶԻԼ



Պրազիլի մէջ մարդիկ ծովեզերքը կը համախմբուին եւ անպայման ճերմակ հագուստ կը կրեն, որպէս խաղաղութեան նշան: Կէս գիշերին յաջորդաբար կը ցատկեն 7 ալիքներու վրայ, եւ իւրաքանչիւր ցատկի ժամանակ կը մերժեն մէկ վատ բան ու կը խնդրեն մէկ լաւ բան:

ՀԱՅԱՍՏԱՆ



Հայաստանի մէջ Նոր տարուան ամենակարեւոր մասը ընտանիքի համախմբումն է: Տունը կը լեցուին դափամայի եւ չոր միրգերու բուրմունքով: Կէս գիշերին մարդիկ կը գրկեն զիրար, կը բանան տան դռները, «լաւ տարին ներս ընդունելու» համար, եւ կը շնորհաւորեն հարազատներն ու բարեկամները:

ԻՏԱԼԻԱ



Իտալացիները կը հաւատան, որ Նոր տարուան առաջին օրը պէտք է կարմիր հագուի՝ բախտ եւ ուրախութիւն բերելու համար: Անոնք այս գոյնը կը համարեն «տաքցնող» եւ «պաշտպանող»:

ԻՆՉ ԿԸ ԲԱՑԱՅԱՅՏԵ ԿԱՂԱՆԴԵԱՆ ՔՈՒ ԱՄԵՆԱՍԻՐԱԾ ՊԱՏԱՌԻԿԴ ԲՆԱԽՈՐՈՒԹԵԱՆԴ ՄԱՍԻՆ



ԽՈՐՈՎԱԾ ՇԱԳԱՆԱԿՆԵՐ (ROASTED CHESTNUTS)

Չափազանց դասական եւ հանգիստ անձ մըն ես: Դուն կը գոհանաս կեանքի պարզ եւ փոքր հաճոյքներէն, ինչպէս՝ տօնական փողոցներու լուսաւորութիւնն ու բոյրը: Շատ չես սիրեր աղմուկը, սակայն կը սիրես ընտանեկան մտերմիկ համախմբումներն ու ամառայինները:



ԿՈՃԱՊԴԴԵՂՈՎ ԿՐԿՆԵՓՈՒԿՆԵՐ (GINGERBREAD COOKIES)

Դուն ունիս ստեղծագործ եւ երեւակայութեամբ լեցուն հոգի: Կը սիրես զարդարել, նկարել, եւ ամէն ինչի մէջ տօնական շունչ անել: Քու մտքիդ մէջ միշտ նուագազոյնը մէկ-երկու նոր գաղափարներ կան:



ԳԱԽԱՉԱՆԱՁԵՒ ՇԱՔԱՐՆԵՐ (CANDY CANES)

Դուն լաւատես ես: Շաքարի ճերմակ եւ կարմիր գիծերը կը խորհրդանշեն կեանքի լաւ ու վատ վայրկեանները, լոյսն ու շուքը: Իսկ դուն դժուար պայմաններու մէջ լաւ տեսնելու սովորութիւնն ունիս: Շատ կը սիրես ընկերներուդ եւ սիրելիներուդ օգնութիւն տրամադրել, յենարան ըլլալ եւ ուրախութիւն պատճառել:



ՉՈՐ ՄԻՐԳԵՐ (DRIED FRUITS)

Դուն չափաւորաւոր եւ գործնական մէկն ես: Կը սիրես պատառիկներ, բայց ոչ չափազանց քաղցրութիւն: Կաղանդի հաւաքներուն ընթացքին, մինչ ուրիշները կը կողոպտեն քաղցրեղէններու պնակները, դուն հեզութեամբ կ'ընտրես ծիրանի չիր մը ու կը մտածես՝ «այս մէկը ամէն առողջապահական է»:



ԿԱՂԱՆԴԵԱՆ ԳԵՐԱՆ (BÛCHE DU NOËL)

Դուն կը սիրես շքեղ ու ճոխ Կաղանդի սեղաններ: Ունիս ճաշակաւոր հոգի եւ կը կարեւորես գեղեցիկ ներկայացումը նոյնքան ինչքան պատառիկի մը համը: Քու տանդ տօնածառը հաւանաբար ունի շլացնող փայլք եւ շատ իւրայայտուկ զարդարանքներ:



«HOT CHOCOLATE»

Դուն փափուկ եւ շատ գուրգուրացող մէկն ես: Քեզի համար Կաղանդը կ'իմաստաւորուի տան ջերմութեան մէջ, փափուկ վերմակներու տակ հետաքրքրական հեքիաթներ կարդալու եւ տօնական տեսերիկներ դիտելու ժամանակը: Մարդիկ միշտ հանգիստ կը զգան քու կողքիդ, որովհետեւ բնական ջերմութիւն մը կը սփռես շրջապատիդ:

ԱՆՈՒՇԱՊՈՒՐ

Բաղադրութիւն՝
- 2 լիտր ջուր
- 500 կրամ ցորեն
- 500 կրամ շաքար
- 200 կրամ ծիրանաչիր
- 200 կրամ սալորաչիր
- 200 կրամ չամիչ
- 20 միլիլիտր մեղր

Զարդարելու համար՝
- Կափա
- Նուռի հատիկներ
- Ընկոյզ

Պատրաստութիւն՝
1.- Ցորենը մաքրել եւ մի քանի անգամ լուլ պաղ ջուրով: Զգել 3-4 ժամ ջուրին մէջ:
2.- Ցորենը տեղափոխել մեծ կաթսայի մէջ, լեցնել առատ ջուր: Դանդաղ կրակի վրայ եփել 3-4 ժամ, կափարիչը մասամբ բաց, մինչեւ ջուրը սկսի նուազիլ եւ ցորենը փափկիլ:
3.- Կրակէն հանել կաթսան: Կափարիչը ամբողջութեամբ փակել եւ ծածկել հաստ կտորով: Զգել ցորենը հանգստանայ առնուազն 3-4 ժամ:
4.- Չիրերու մեծ կտորները կիսել կամ քառորդի վերածել: Դնել տաք ջուրի մէջ, որպէսզի փափկին:
5.- Ցորենը դարձեալ դնել կրակին: Աւելցնել թրջած չամիչն ու չիրերը: Վրան լեցնել այնքան եռացած ջուր, որ խառնուրդը ապուրանման դառնայ: Եփել ժամանակ առ ժամանակ խառնելով:
6.- Աւելցնել շաքարաւազը: Խառնել եւ եռացնել եւս 1-2 վայրկեան:
7.- Կրակէն հանել եւ ձգել որ պաղի:
8.- Անուշապուրը լեցնել փոքրիկ ամաններու մէջ եւ զարդարել ըստ ցանկութեան:



ՆՈՐ ՏԱՐՈՒԱՆ ԳԻՇԵՐ

ՄԵՏԱՔՍԷ ՊՕՂՈՍԵԱՆ

Թէ աշխարհում փակ դռներ կան,
Թող որ բացուեն այս գիշեր,
Ու Նոր տարին նոր խնդութեամբ
Թող ներս մտնի այս գիշեր:

Թէ կան դատարկ, համր տներ՝
Մանկան ճիշդ թող լցուեն,
Ով փնտռում է սրտանց մէկին՝
Յանկարծ գտնի այս գիշեր:

Թէ կան լացող, տխուր աչքեր,
Թող ծիծաղեն այս գիշեր,
Կանչող ձեռքերն իրար հասնեն,
Հրաշք ապրեն այս գիշեր:

Թէ կան սրտեր՝ չար նախանձով,
Դառնան բարի ու ներող,
Եւ ուրիշի ուրախ կեանքով
Խանդավառուեն այս գիշեր:

Թէ աշխարհում պանդուխտներ կան,
Թող տուն դառնան այս գիշեր,
Հայրենական յաւերժութեամբ
Ողջագուրուեն այս գիշեր:

ԻՆՉՊԷՍ ԳՐԵԼ ԼԱԻԱԳՈՅՆ ՆԱՄԱԿԸ ԿԱՂԱՆԴ ՊԱՊՈՒԿԻՆ

Կաղանդ Պապուկը, յատկապես այս օրերուն, շատ զբաղած է: Բայց եթէ կը փափաքիս, որ քու նամակդ տարբերի մնացեալ հազարաւոր նամակներէն, որոնք կը դրկուին իրեն, ահա մի քանի գաղտնիքներ, որոնք կրնան օգտակար դառնալ բոլոր տարիքի բարի փոքրիկներուն:



- 1.- Սկսէ՛ ազնիւ բարեւոյ մը՝ «Բարեւ սիրելի Կաղանդ Պապուկ»: Կարելորը՝ ջերմ ու քաղաքավար ըլլալն է:
- 2.- Ապա Պապուկին պատմէ՛ կարճ պատմութիւն մը անցնող տարուան մասին: Օրինակ՝ պատմէ՛ ինչ նոր բան սորվեցար կամ բարի արարք մը, որ գործեցիր: Մէկ-երկու նախադասութիւն կը բաւէ:
- 3.- Այժմ ժամանակն է խնդրելու նուէրներդ: Սակայն կարելոր է, որ ցանկդ ըլլայ չափաւոր եւ տրամաբանական, որովհետեւ չտեսութիւնը լաւ բան չէ: Նախադասութիւնդ կրնաս սկսիլ հետեւեալ ձեւով՝ «Եթէ հնարաւոր է...» կամ «Ես շատ կը սիրեմ...»:
- 4.- Քու նուէրներդ ուզելէ ետք, անպայման փափաք մը ներառէ՛ ուրիշներուն համար: Օրինակ՝ հայրենիքիդ համար մաղթէ՛ բարգաւաճութիւն, ժողովուրդիդ համար ցանկալ խաղաղ օրեր, ընտանիքիդ անդամներուն համար խնդրէ՛ առողջութիւն: Կաղանդ Պապուկը կը սիրէ բարեսիրտ փոքրիկներ, որոնք կը մտածեն նաեւ ուրիշներուն ուրախութեան մասին:
- 5.- Վերջաւորութեան մի՛ մոռնար շնորհակալութիւն յայտնելու: Նամակդ կրնաս աւարտել հետեւեալ բառերով՝ Կանխայայտ շնորհակալութիւններով, կամ՝ Քեզ միշտ անհամբեր սպասող:
- 6.- Ուշադրութիւն դարձնիր ձեռագիրիդ: Մի՛ մոռնար, որ Կաղանդ Պապուկը ծեր է եւ ականոց կը կրէ: Գրէ՛ յստակ, ուղիղ տողերով եւ ընթեռնելի տառերով, որպէսզի ան դիւրութեամբ կարդայ նամակդ:
- 7.- Վերջապէս, Կաղանդ Պապուկը կ'ըսէ, որ լաւագոյն նամակները անոնք են, որոնց տողերուն մէջ ան կրնայ տեսնել ՔԵԶ՝ քու ձայնդ, քու բնաւորութիւնդ, եւ ամենակարելորը՝ բարի սիրտդ: Ուրեմն գրէ՛ անկեղծօրէն, գրէ՛ սիրով:

ԳԻՏԷՐԻ ԹԷ...

Բելոռային ցուրտը շատ խիստ կը թուի, սակայն իոն ապրող անասուններէն իւրաքանչիւրը ունի իր գաղտնի հնարքը, որպէսզի դիմանայ ձիւնին, քամիին ու -40°C սառնամանիքին: Ահաւասիկ հետաքրքրական փաստեր:



- Գիտէ՞իր թէ... բոլոր ստնաւորներուն մէջէն, բելոռային աղուէսը ունի ամենատաքուկ մուշտակը, որ գոյն կը փոխէ՝ ըստ եղանակի: Ձմրան ընթացքին ամբողջովին ճերմակ կը դառնայ, որպէսզի ձիւնին մէջ չերելի: Իսկ ամառը կը դառնայ շագանակագոյն, որպէսզի քարերու եւ ժայռերու մէջ կորսուի:



- Գիտէ՞իր թէ... ծովային առիւծները (sea lions) զուարճասէր են: Երբեմն կը խաղան քարերով կամ ջրային բոյսերով, կը սահին սառցաբեկորներուն վրայ եւ նոյնիսկ կը կազմակերպեն «խաղալու մրցումներ»: Այդպիսով, միշտ շարժելով անոնց մարմինները կը մնան տաքուկ:



- Գիտէ՞իր թէ... բելոռային բուն ունի փետուրներ մինչեւ ոտքի մատներուն շուրջ, որպէսզի մարմնին բոլոր մասերը պաշտպանուած ըլլան:

ԶԵՌԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Ընտանեօք եղեւին զարդարելը Կաղանդի ամենատաքուկ եւ միատրող արարողութիւններէն մէկն է: Այն մէկ տեղ կը բերէ մեծ ու փոքր, ստեղծելով համերաշխութեան եւ յիշատակներով լի մթնոլորտ մը: Այս պահը յատկապէս իմաստալից կը դառնայ, երբ զարդարանքներէն ոմանք պատրաստուած ըլլան ընտանիքի անդամներուն կողմէ: Այդպիսով տօնածառը կը դառնայ շատ աւելին քան լոկ զարդ մը:

Յիշէ՛, որ քու պատրաստած զարդարանքներդ պէտք չունին բարդ կամ ժամանակատար ըլլալու: Թերեւս երբեք չէիր մտածած, թէ փոքրիկ փայտէ՛ ցպիկներ անգամ կրնան ճոխացնել տօնածառդ: Ահաւասիկ մի քանի օրինակներ, որոնք կրնան յաւելեալ գոյն եւ շունչ բերել տօնածառիդ:

Ներշնչուի՛ր այս պատկերներէն եւ քու երեակայութեանդ թելեր տալով՝ պատրաստէ՛ աւելի գեղեցիկները քու ընտանիքիդ հետ միասին:

Բարի եւ ուրախ ժամանց:



ԳՈՒՆԱԶԱՐԴՈՒՄ

Գունազարդէ՛ այս հայ ձիւնամարդը հայկական գոյներով եւ նախշերով:



ԽԱՂ

- Տառերը ճիշդ շարէ՛ եւ բառեր կազմէ՛:
- փնադմարծ _____
 - հասնկա _____
 - կնեղի _____
 - նէրտ _____
 - ծանօռատ _____
 - լեխզոյնծ _____
 - նառավար _____
 - ռենցոճ _____
 - կյոմ _____
 - զոկլօ _____



ՀԱՆԵԼՈՒԿ

Մանուկներուն սիրելի,
Ու մեծերուն բարեկամ,
Կ'այցելէ մեզի, բոլորիս,
Տարին միայն մէկ անգամ:



ԵՐԵԿ ԹԷ ԱՅՍ ՆՈՐ ՏԱՐԻՆ...

ՀՅԴ Գանատայի Պատանեկան Միության Մոնթրեալի եւ Լաալի «Դրօ-Գետաշէն» մասնաճիւղերու պատանիները Նոր տարուան սեմին կը գրեն իրենց փափաքները՝ իրենց հայրենիքին եւ ժողովուրդին համար:

Սիրելի հայրենիքս,

Քեզի կը մաղթեմ ապագայ մը՝ տեական խաղաղութեամբ, ապահովութեամբ եւ միասնականութեամբ: Կը ցանկամ, որ ըլլաս երկիր մը, ուր ընտանիքներ կրնան իրենց ապագան կերտել առանց վախի, իրենց զաւակներուն տալով շատ հնարաւորութիւններ: Իսկ սփիւռքահայերուս համար կը մաղթեմ ուժեղ կամք, որպէսզի շարունակենք պահպանել մեր մշակոյթը, լեզուն, ասանդութիւններն ու պատմութիւնը:

Սիէա Ճապրայեան

Կը յուսամ, որ մեր հայրենիքը յառաջանայ, իսկ հայ ժողովուրդը առողջութեամբ, ապահովութեամբ եւ երջանկութեամբ օրհնուի այս տարի: Նաեւ կը յուսամ, որ յաջորդ սերունդները կը շարունակեն հայ լեզուն գրել, կարդալ ու խօսիլ ամէն օր, եւ հայրենասիրութեան արժէքը լիով կը հասկնան:

Միա Գանիգարօ

Նոր տարուան առթիւ, հայրենիքիս ու հայ ժողովուրդիս կը մաղթեմ սէր, ուրախութիւն, յաջողութիւն եւ առողջութիւն: Կը յուսամ, որ այս նոր տարին բերէ խաղաղութիւն եւ նամանաւանդ յաղթանակ:

2026 թուականը թող հայութիւնը դարձնալ համախմբէ, որպէսզի մոռնանք մեր բոլոր դժուարութիւնները: Նաեւ, 2026-ին, հայ փոքրիկներուն փոխանցենք հայ ազգի արժէքները եւ սորվեցնենք մեր հարուստ մշակոյթը:

Վերջապէս, սրտանց կը շնորհաւորեմ աշխարհի չորս ծագերուն գտնուող բոլոր հայերուն Նոր Տարին եւ Սուրբ Ծնունդը:

Արին Թորիկեան

Նոր տարուան առթիւ, հայ ժողովուրդին կը մաղթեմ առողջութիւն, յաջողութիւն ու քաջութիւն: Կը յուսամ, որ 2026 թուականը միասնութեան ու խաղաղութեան տարի մը ըլլայ: Թող այս նոր տարին հայ ժողովուրդին համար նոր դռներ բանայ ու տեղ տայ դրական փոփոխութիւններու: Նաեւ, կը յուսամ որ մենք՝ հայերս, շարունակենք պայքարիլ ու ծառայել մեր հայրենիքին, որպէսզի ապագայ սերունդները գիտնան մեր պատմութիւնն ու մշակոյթը:

Բալիկ Սիւսահեան

Սիրելի հայրենիքս, Նոր տարուան առիթով քեզի կը մաղթեմ անսահման ուրախութեամբ եւ խաղաղութեամբ լեցուն օրեր: Թող 2026-ը քեզի բերէ նորանոր յաջողութիւններ եւ պահէ քեզ սիրոյ լոյսին մէջ: Սրտանց կը փափաքիմ, որ միշտ հաւատքով առաջ երթաս, իսկ ժողովուրդդ քու սուրբ հողիդ ու օդիդ արժանի դառնայ:

Թ՛րղ երազներդ իրականանան եւ ըլլաս կայտառ ու եռանդուն:

Մովսէս Աղամեան

Նոր տարուան առիթով Հայաստանիս եւ ամբողջ հայ ժողովուրդիս կը մաղթեմ աւելի միասնական եւ խաղաղ օրեր: Կ'ուզեմ, որ մեր երկիրը զօրանայ, եւ բոլորս զինուինք հաւատքով: Թող նոր տարին բերէ առողջութիւն եւ ուժ, որպէսզի յաղթահարենք այն բոլոր խոչընդոտները, որոնք մեզ ետ կը պահեն: Այս տարի, թող լեցուն ըլլայ նոր փորձառութիւններով եւ յաջողութիւններով, որոնց շնորհիւ կրնանք աւելի դրական ձեւով նայիլ կեանքին:

Նառա Զաքարեան

Նոր Տարուան եւ Սուրբ Ծննդեան զոյգ տօներուն առթիւ, իմ փափաքս է, որ Հայաստանը կանգուն մնայ, հայկական բանակը զօրաւոր ըլլայ, եւ մեր ազգը փայլիլի: Իսկ հայրենի հողէն հեռու գտնուող սփիւռքահայութեան կը մաղթեմ տաքուկ եւ ուրախ օրեր, շրջապատուած՝ իրենց ընտանիքի անդամներով եւ շատ սիրով:

Կարին Տէր Սահակեան

Ո՞Վ Կ'ՈՒԻՋԷ ԸԼԼԱԼ ԲԱԶՄԱԳԷՏ

Դեկտեմբեր ամսուան հարցումներու պատասխաններուն ժամկէտն է 7 Յունուար 2026: Հետեւաբար, սիրելիներ, արձանագրեցէք զանոնք թուղթի մը վրայ, նշելով ձեր անունն ու ձեր յաճախած դպրոցին անունը: Յետոյ ուղարկեցէք այդ թուղթը Հորիզոնի խմբագրատուն՝

3401 Olivar Asselin
Montréal, Québec
H4J 1L5

1.- Աշխարհի տարածքին, ո՞ր երկրի ժողովուրդն է, որ Նոր Տարին կը դիմաւորէ կէս գիշերուան ժամը 12-ին. 12 զանգերու ղօղանջներուն հետ ուտելով 12 խաղողի հատիկներ:

ա.- Սպանիա:
բ.- Ճափոն:
գ.- Յունաստան:

2.- Հայաստանի մէջ Նոր տարուան ամենակարեւոր մասը ինչն է:

ա.- Ընկերներով հաւաքոյթներն են:
բ.- Ընտանիքի համախմբումն է:
գ.- Կարմիր հագուիլն է:

3.- Ո՞վ է «Նոր Տարուան գիշեր» բանաստեղծութեան հեղինակը:

ա.- Սիլվա Կապուտիկեան
բ.- Մետաքսէ Պօղոսեան
գ.- Զապէլ Եսայեան

4.- Կարդալ «Նոր Տարուան գիշեր» բանաստեղծութիւնը ու ամբողջացնել բաց մնացած բաժինները.

Թէ կան սրտեր՝ չար նախանձով,
Դառնան ու ,
Եւ ուրիշի կեանքով
..... այս գիշեր:

5.- Որո՞նք են անուշապուր պատրաստելու երեք գլխաւոր բաղադրութիւնները:

ա.- Ջուր, չամիչ եւ մեղր:
բ.- Ջուր, ցորեն եւ ծիրանաչիր:
գ.- Ջուր, ցորեն եւ շաքար:

6.- Ստնաւոր կենդանիներուն մէջ, ո՞ր կենդանին ունի ամէնէն տաքուկ մուշտակը:

ա.- Գայլը:
բ.- Բեւեռային արջը:
գ.- Բեւեռային աղուէսը:



Մանկապատանեկան Հորիզոնը կը հովանաւորեն ՀՕՄ-ի Գանատայի Շրջանային վարչութիւնը եւ Գանատայի շրջանի իր 10 մասնաճիւղերը

Հեռաձայն (514) 332-3757
Email: sylvia@horizonweekly.ca
Խմբագրութիւն՝ Անահիտ Պալեանի
Թիւր պատրաստեց Արիանէ Թասլաքեան
Զեւայղացք՝ Լորի Խաչերեանի